

մէջ կը գրէին իրենց Յայտմաւուրքը, տակաւին ողջ էր Սօջայ Սաչիկ ի Հին Ջուղայ: Սօջայ Սաչիկ մեռած է հոն: Հ. Ալիշան կը վկայէ թէ «Գտանին եւ մատրանաձեւ շիրիմք, որպիսի է Սօջայ Սաչիկի», եւ մեզի կու տայ արձանագրութիւնը. «Սուրբ խաչս բարեխաւս առ Քրիստոս, մեծ եւ անուանի քաղաքապետ Սաւջայ Սաչիկին, որ ի ՌԾԳ (1604) թուականին հանդեաւ ի Քրիստոս. Սաչս յիշատակ Սաւջայ Սաչիկին եւ կողակից Մարիամին»⁴:

Սօջայ Սաչիկ մեծատոհմ ըլլալէ դատ՝ Հին Ջուղայի «քաղաքապետ» ալ էր. իր այդ պաշտօնական հանգամանքն ըլլալու էր պատճառը, որ Շահ Աբաս Ա. 1603 թուականի Հոկտեմբերին իր այցելութեան՝ անոր տունը կ'իջեւանէր:

Սօջայ Նազարին եւ իր գերդաստանին նուիրուած իմ վերոյիշեալ մենագրութեան մէջ, Սօջայ Սաչիկի հայրը նշանակած էի Սօջայ Մանուկ Նազարը, նոյնպէս մեծատոհմ հին Ջուղայեցի, հետեւելով Հ. Ալիշանի⁵: Այժմ կու գամ ուղղել այդ սխալս՝ յիշեալ նորայայտ Յայտմաւուրքի հաղորդած ցանկերուն վրայէն:

Գահակալութեան տանկաց սուլթան Մահմատի խոնդքարին (հիւսնեար). եւ պարսից թագաւորին Շահաբասին, եւ ի մերոյս պարոնութեան Մեր Հասանին: Ի յայտմամբ եղև զբաւ սուրբ գրոցս յորում է. Ը. (7, 8) ամալ յառաջի, աղիչի անուամբ մի ոմն ի զօրացն խոնդքարին, ելեալ հակառակեցաւ ընդ նմա եւ բազում զորս ժողովեաց եւ յայսբան ամս որ մարտեցաւ ընդ զօրաց թագաւորին իւրոյ, որչափ չարիքս արարին վերայ աշխարհի ի Հոռոմաց տուն, ի Սեւաստ, ի Թուխատ, ի Կեսարիայ, ի Յանկուրիայ, ի Մարզման, ի Յամասիայ, ի Յեզընկայն, եւ ի Ղարասարն եւ յամենայն տեղիս, որչափ ոճիրս գործեաց, զոր ոչ կարեմ ընդ դրով արկանել: Որչափ քահանայս եւ սարկաւագոնս յաստիճանաւորաց եկեղեցոյ սպաննեալ նահատակեաց, եւ կամ որչափ հարս եւ մարս անորդի արար, եւ զորս անեղբարս: Թող զայն որ Ըժ. (800) անմեղ տղայս ի Սեւաստու ի զերութիւն վարեաց: Յետոյ ինքն իւր չարեօք սատակեցաւ եւ բարձաւ չարն ի միջոյ, եւ ոչ ետես զիստուն: Այս ամենայն եկն ի վերայ մեր վասն ծովացեալ մեղաց մերոց, եւ յանցանաց: Դարձեալ ի յայտմամբ ել արքայն պարսից Շահաբասն ի յԱսպահանայ եւ եկեալ բազում զօրօք ի վերայ քաղաքին Թաւրիզու, խնայելով ի քրիստոնեայնս, վասն զի էր բարի բարուք եւ բարեկամ քրիստոնէից, խաղաղարար եւ աստուածատէր. վասն որոյ տիրեաց ամենայնի մինչեւ յերեւան»:

Չարմանալիօրէն մեզի շնն հասած Հին Ջուղայ գրուած ձեռագիրներ: Անտարակոյս Հին Ջուղայեցիք մեկենասած ըլլալու էին բազմաթիւ ձեռագիրներ՝ իրենց անձնականին համար, կամ զանազան սրբավայրերու համար: Հաւանաբար, բունագրութիւն թաղուեցան եւ փճացան: Ընդհակառակն, շատ խոշոր թիւ մը հասած է նոր Ջուղայ գրուած կամ վերանորոգուած ձեռագիրներու:

Հոս աւելցնեմ՝ որ 1972ին, նոր Ջուղայի գերեզմանատան մէջ դտայ Սօջայ Սաչիկի եղբոր՝ Սօջայ Վաթանի աղջկան Իփարի տապանադիրը, հետեւեալ արձանագրութեամբ, «Այս է / Տապան / Իփարին / ԹՎ(ին) ՌՁ (1631)»:

4. Սիւակաւն, տպ. Վենետիկ - Ս. Ղազար, 1893, էջ 424:

5. Անդ: